

1892 Վ 7-12
ՎՐԱՐԺ

ՄԻՍՏԵՐ ՊԼՈՒՄՊՈՒԴԻՆԳԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

ՍԻՆԱՏՈՊՈՒԿ ԶԵԽԻ ¹⁾

Մի անգամ, պատահմամբ ներս մտալ մեր ամենալաւ հիւրանոցներից մէկի սեղանատունը: Համեստ նստելով դռան մօտ զանազակ մի սեղանի, ձեռքս առալ կերակուրների լայնածաւալ ցանկի թուղթը: Լոյսի աղօտ նշույլով ես նրան շուռ տւի ձախ կողմը — բայց այնտեղ ոչինչ: Ից ոչինչ: Եւ կար: Ապա, ծնշւած հոգոց հանելով ես սկսեցի աչքի անցնել նրա երեսի գերմաներէն գրած կողմը: Այդ իմ ուսումնասիրութեան միջոցին ուշադրութիւնս դրաւ եւ քաջլերի մտեցող պղծուկը, եւ երբ ես անհամարձակ աչքերս վեր ուղղեցի՝ դիմացս կանգնած տեսալ կեններին ²⁾, որը իւր՝ հլու, լարւելու չափ կռացած դիրքով, իւր բարակ, շնորհալի սե Ֆիգուրով չիշեցնում էր մի մեծ հարցական նշան: Սրա ետեւից կռած էին զէպի ինձ նմանապէս մի քանի այլ հարցական նշաններ զանազան մեծութիւնների: Այս բազմադէմ տպաւորիչ հարցը ինձ այնպէս շփոթեց որ ես յանկարծակի դուրս թողի շրթունքներից արդեօք ռանիք Վիկենույի rizky ³⁾:

Զեխերէն այդ խօսքերը բերանիցս դուրս թռան թէ ոչ — ես

¹⁾ Ս. Զեխ'ը — նորագոյն չիս գրականութեան առաջնակարգ ներկայացուցիչներից մէկն է: Մեծած է 1846 թ.: Բացի արձակ գրածներից ունի նաև բանաստեղծութիւններ, որոնք շատ լարգած եւ տիրած են իւր հայրենիքում: Այս մէկ նրա ծաղրը գրած է 1879 թ.: Ներկալ թարգմանութիւնը արւած է ռուսերէնից:

²⁾ Այդպէս են կոչւում հիւրանոցների, ճաշարանների, գարնջուր ծախողների սպասաւոր ծառաները գերմանական երկիրներում:

³⁾ Կոտլետի մի տեսակը:

ինքն վախեցալ դրանց ձայնից այսպիսի մի տեղում Դիմացս կանգնած հարցական նշանների վրա իմ արտասանած խօսքերը ներգործեցին մի կախարդական հմայութեամբ: Նրանց կռացած մարմնի մասերը ուղղեցան ըստ էության և մի ակնթարթում Դիմացս կանգնած էին մի քանի հալածական նշաններ. բայց միայն մի ակնթարթ էր դա: Եւ երբ ես բարձրացրի ամօթից կախ գցած աչքերս—Դիմացս կանգնած էր նոցանից մէկը, նա՛ որ ամենից քիչ շնորհալին էր. միւսները հեռացել էին ասես կախարդութեամբ: Դիմացս կանգնած մնացած օրինակը սիգօրէն ետ գցեց իւր ամբողջ կազմածքը այնպէս որ յատակի հետ կազմեց մի բութ անկիւն: Բարձրից ներքեւ նայում էր վրաս կիսախուփ շեկաւուն արտեանունքի տակից և նրա բերանի շուրջը խաղ էր խաղում մի արտայայտիչ հեզնական ժպիտ: Դորա փոխարէն նրա հաճոյակատարութեանը տեղ տւեց մի սիրուն արձակութեան: Վերքաշելով իւր ծնօտը նա կամաց-կամաց քաշքշում էր իւր երկար և բաց գոյնի բակեմբարդը ¹⁾ կամենալով կարծես նրան դուրս քարշել, այնուհետեւ նոյն գործողութիւնը կատարեց միւս բակեմբարդի հետ և վերջապէս արտասանեց արիստոկրատիկական և ոչ շեխական շեշտով—լիւի՛մնով: Դէ ի հարկէ լիմննով, զատասխանեցի ես, և կուրծքս լցւեց ուրախութեամբ և հպարտութեամբ. հասկանում է եղել չեխերէն. նոյն իսկ չեխերէն էլ պատասխանեց:

Այդ ժամանակ հայեացքս ընկաւ հարեան սեղանի վրա: Այնտեղ նստած էր մի կարճիկ բայց փէր մի մարդ բոխչաւոր հագուստով, յարթ ածիլած և գերուկ երեսով, լայնընդերքի վրա գտնւող նօսր ընչանցքով և երկուսի ձեղքւած ծնօտով: Այս մարդու մեծ և կապտագոյն աչքերը յառած էին ուղղակի ինձ վրա: Ես իմերը ուրիշ կողմ գցեցի բայց մի ըստ էության յետոյ էլի նայեցի վրան քարշելով այն զօրութեամբ որ ունի յառած հայեացքը:

Ձէ, դէ սա արդէն միանգամայն վեր էր քաղաքավարութեան ռահմաններից: Այս մարդը ինձ զննում էր բոլորովին անամօթաբար. այսպէս կամաւ զննող հայեացքով նայել կարող է միմիայն նկարիչը իւր կաղապարի վրա կամ մուգէի այցելուն ի ցոյց դրւած էսկիմոսի վրա: Վերջապէս այս յանդուգն ուսումնասիրողի վրա ես

¹⁾ Միւրուք—ծնօտի տեղը վեր արած:

զցեցի՝ իրաւացի բարկութեամբ լի իմ հայեացքս։ Ակներև է որ նա ըմբռնեց այդ իմ հայեացքի նշանակութիւնը. տեղիցը վերկացաւ և թեթև գլուխ տալով մօտենալով սեղանին կոտորուած գերմանական լեզուով արտասանեց. թոյլ տւէք Ձեզ ներկայանամ—Յովնաթան Պլումպուդինգ, Բլէկեօրնից, Անգլիայի Լանկաստեր դքսութիւնից։

Ես գլուխ տւի թեթև կերպով—բայց դէմքս պահպանեց սառն արտայայտութիւն։ Նրա ասածը անշուշտ մեղմացնող հանգամանք էր—բայց ամեն բան չի թոյլ տրւած նաև անգլիացուն։

Սակայն առանց քաշելու միտեր Պլումպուդինգը նստեց կողքիս և շարունակեց։ Դուք զարմանում էիք այն հետաքրքրութեանը որով ես նայում էի ձեզ։ Պարտք եմ համարում ձեզ բացատրութիւն տալ։ Դատելով այն խօսքերից, որոնցով դուք այս րոպէին դիմեցիք կեններին, ես եսթաղրում եմ որ դուք Ձեխ էք։

—Դուք չէք սխալուում։

—Ճշմօրիտ, իսկական Ձեխ։

—Ի հարկէ։ Միթէ Ձեխը ձեզ համար զարմանքի արժանի մի հազազիւտ բան է։

—Ուրեմն իսկական Ձեխ էք։ Առաջին չեխը որին ես տեսնում եմ երես առ երես, որի ձեռքը կարող եմ իրապէս սեղմել։ Վերջապէս ես գտայ այն ինչ որ ապարդիւն կերպով պտուում էի երկու օր շարունակ քաղաքիս մէջ։

—Այդ ի՞նչպէս։ Դուք արդէն երկու օր է ինչ Պրազայումն էք և միայն այժմ էք պատահում առաջին Ձեխին։ Ձէ, դա անկարելի բան է, անհաւատալի է։

—Սակայն սա ճշմարտութիւն է։ Այ տեսէք. հայրենիքումս ծանօթացայ մի երիտասարդ սլաւոֆիլի հետ, որը մեզ ամենիս հետ վիճում էր թէ Ձեխաստանը ամբողջովին գերմանական չէ, թէ, ընդհակառակը, նրա բնակիչների մեծ մասը կազմում է մի առանձին ժողովուրդ որը խօսում է իրան յատուկ չեխ լեզուով և որը ունի, նոյն իսկ բաւականին հարուստ, սեփական մի զրականութիւն։ Ուստի ես վճռել էի որ յետագայ ճանապարհորդութեանս պիտի այցելեմ անպատճառ նաև Ձեխաստանը անձամբ համոզելու համար այդ պատմածի ճշմարտութեանը կամ սնճմարտութեանը։ Հէնց այդ պատճառով Դրեզդենից ճանապարհս քղեցի Ղէպի՝ իս

զան. ճանապարհին ես հետաքրքրութեամբ էի զննում ճանապարհորդներին և լարած կերպով ականջ էի դնում նրանց բառաւին — բայց իզուր: Ամբողջ ճանապարհի վրա մինչև Պրագա ես լսում էի միմիայն գերմաներէն և ֆրանսերէն լեզուները և ոչ մի հասարակ չեխերէն:

— Ներողութիւն, դուք զոր կարգովն էիք գալիս:

— Երկրորդ կարգով. առաջինում չեմ ճանապարհորդում սկզբունքով: Մի քանի կայարան Պրագա չը հասած — ներս մտաւ մի ծեր մարդ մի ջահիլ գեղեցիկ տիկնոջ հետ: Այդ գեղեցիկուհու տիպարը ինձ այնքան ոչ գերմանական թւաց, այն աստիճան բնորոշ սլաւական — որ ես նրան միանգամայն Լիւթուշի թոռան թոռ կարծեցի: Այն սլաւոֆիլը իմ հայրենիքում սովորցրել ինձ մի քանի չեխական նախադասութիւններ: Ես էլ օգուտ քաղեցի այդ իմ համեստ տեղեկութիւններից՝ չեխերէն խօսելու համար իմ ենթադրած չեխուհու հետ: Փորձած փորձիս միակ արդիւնքը այն եղաւ որ ես կրկին համոզեցի թէ ինչքան նրա՝ կապոյտ աչքերին և ուռած բաց վարդագոյն շրթունքներին սաղում է արհամարդական արտայայտութիւնը: Եւ վերջապէս միւս ուղեկիցներս էլ նայեցին վրաս զարմանքով, հեղնական ժպիտով, կարծես թէ ես յանցանք գործած լինէի, մի չընդունած բան արած լինէի: Այնու ամենայնիւ ես փորձ փորձեցի իմ չեխական նախադասութիւններից մինով դիմել կոնդուկտորին: Բայց սա էլ նայեց վրաս սկզբում զարմանքով, իսկ յետոյ այնպէս իբր թէ արածս անտեղի հանաք լինէր: Սրանից յետոյ ես այլ ևս վախ էի կրում փայլելու չեխ լեզուով: Սիրուն սլաւոֆիլ, մոտծում էի ես, սա է ուրեմն քո գրականապէս զարգացած լեզուն որ նոյն իսկ անհամարանք է յարուցանում երկաթուղային ամենաստոր ծառաների մէջ:

— Օհօ — ասացի ես վճռողաբար, — այդքան ցածր դեռ մենք չենք ընկել. բանը շատ պարզ է. մեր երկաթուղիների մեծ մասը գտնւում է գերմանացիների ձեռքին և երկրորդ որ ձեր բռնած կարգով մեզանում գլխավորապէս օտարներն են ճանապարհորդում:

1) Table d'hôte: table = սեղան, hôte = հիւր. հիւրանոցի ճաշասեղան կամ ճաշատուն:

— Ես պէտք է ձեզ հաւատամ։ Ես ինքս օտար երկրացի եմ և ան-
ծանօթ ձեր բարք ու վարքերին։ Իսկ Պրագայում Վադսլից
իջալ թէ չէ, բեռնակիրը զիմեց ինձ գերմաներէն լեզուով, Հիւրանոց-
ների պատերից կախած բոլոր յայտարարութիւնները՝ գերմաներէն են։
Եկալ Հիւրանոց և Հիւրանոցի ծառան ինձ բարեկեց գերմաներէն։ Երգե-
հոնի փողերը ամենահաստերից սկսած մինչև ամենաբարակները միայն
գերմանական հնչիւններ էին հանում։ Ծառայողները խօսում էին գեր-
մաներէն։ Հիւրերից և ոչ մէկը մի հատ բառ չարտասանեց չեխերէն։
Տաքլ-դոտին ¹⁾ ժողոված զանազան կարողութեան, հասակի և
սեռի մարդիկը խօսում էին գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն,
իտալերէն, մի խօսքով ամեն տեսակ լեզուով, միայն չեխերէնն էր որ
չէր լսում սրանց մէջ։

Ես ներս մտալ ամենամօտ և շքեղ մի սրճատուն. այստեղ ևս
ինձ դիմաւորեցին գերմանացի կեղնները և ամեն կողմ լսում էր
գերմաներէն բառաւոր։ Ներս մտալ մի քանի փառաւոր մազադին-
ներ և սրանց տէրերը, ծախողները, զանապետները զիմում էին
ինձ գերմաներէն։ Այցելու գնողները, մի քանի խանութնե-
րում ժողոված տիկիների մի բազմութիւն, հարցնում և սա-
կարգում էին բացառապէս գերմաներէն լեզուով։ Ես վարձեցի մի
ուղեցոյց օտարականի և հետը շրջեցի կառքով բոլոր գլխաւոր փո-
ղոցները։ Գերմաներէն լեզուով նա դարձնում էր իմ ուշադրութիւնը
զանազան յուշարձանների, ցոյց տւեց ինձ գերմանական կաղնօն,
գերմանական գիմնադիան մի փառաւոր պալատի մէջ, գերմանական
գրական ընկերութիւնը, գերմանական համալսարանը ¹⁾ դռան մօտ
կանգնած խալտաճամուկ բուրշերով ²⁾, գերմանական թատրոնը, գեր-
մանական...

— Բայց չէ որ նա ձեզ ազգային թատրոն էլ ցոյց տւեց։

— Նա ինձ ցոյց տւեց մի շքեղ շինութիւն, ուր չեխ մուսան
միայն զալ տարի պիտի բնակութիւն հաստատի. իսկ այդ շինու-
թեան քամակին մի տուն, որի մէջ նա բնակւում է այժմ։ Սակայն
ես համոզւեցի որ սա, նման բոլոր ուղեցոյց առաջնորդներին, ան-

¹⁾ 1879-ին Պրագան չունէր չեխ համալսարան։

²⁾ Բուրշէ գերմաներէն նշանակում է մեծ տղա։

բարեխիղճ ստախօս էր։ Ես կամեցայ ներսից տեսնել այդ տունը և նա պատասխանեց որ հէնց այդ ժամին ընկերակցիս¹⁾ ժամ էր։ Բայց ես հաստատ մնացի ասածիս վրա։ Վերջապէս—մտածում էի ես, առիթ կունենամ լսելու չեխերէնը։ Մենք ներս մտանք և ես տեսայ բեմի վրա կանգնած դերասաններ և դերասանուհիներ, որանք արձակ համարձակ խօսում էին ընկերակցիսից առաջ։ Ահա մի խումբ աչքի ընկնող դերասանների—ականջ եմ դնում ըստէպէս և համոզւում, որ այդ չեխ կարծեցեալ դերասանուհիները բարձրաձայն խօսում են գերմաներէն։ Նեղացած՝ ես դուրս եկայ թատրոնից և արձակեցի ստախօս առաջնորդիս։ Այնուհետև ինքս ինքնագլուխ մի քանի փորձեր արի։ Ես կարողացայ մտնել մի քանի քաղաքացիների ընտանեկան սրբարանները բնակարան վարձելու պատրակով լրագիրների համաձայն քրահով տրուող տներում։ Դռներին կայցրած էին չեխերէն անուններ, բայց ներսը մտնելուս պէս տանտէրը դէն դրեց գերմանական լրագիրը, տանտիկինը բարեկեց ինձ գերմաներէն, օրիորդ աղջիկները դաշնամուրի ձայնակցութեամբ գերմաներէն էին երգում և թերթում գերմանական ծաղրական թերթեր... Իսկ մի երիտասարդ պրոֆեսորին այցելած ժամանակ—տեսա՞յ նրան գերմաներէն մի գիրք յօրինելիս։

—Այդ ամենը ոչնչից ոչինչ չի ապացուցանում, ասացի ես գրեթէ զայրացած։ Դա միայն մի դժբաղդ պատահուկ էր որ դուք ամեն տեղ գերմանական բառքուի էիք հանդիպում։ Զեխաստանը և նրա սիրտ Պրագան բնակեցրած է մեծ մասամբ չեխերով։ Գերմանացիների հետ մենք չունինք և մեր յարաբերութիւնները լարւած են։ Թոյլ տւէք ինձ լինել ձեզ առաջնորդ և ես ձեզ կապացուցանեմ շատ շուտով որ Պրագան չեխ քաղաք է։ Անշուշտ մենք չենք գնայ գլխաւոր փողոցով. մենք կը գնայինք քաղաքի հեռու թաղերը կողքի փողոցներով։ Այնտեղ—այդ կողքի փողոցներից մինի վրա դուք կը գտնէիք չեխ գեղարեստասիրական կլուբը, մի ուրիշում—չեխ գրական ակումբը, մի խուլ փողոցում—չեխ քաղաքային կլուբի մեծ շինութիւնը, քաղաքի ծայրում չեխ մարմնամարզական դահլիճը, ամենահեռու արւարձաններում հիանալի չեխ դպրոցական

¹⁾ Ներկայացումի փորձը, Բառացի նշանակում է կրկնողութիւն։

շէնքսեր. եթէ դուք չէք պահանջում անպայման շքեղութիւն—ես կը տանեմ ձեզ շատ հիւրանոցներ և սրճարաններ, որոնց յաճախում են միմիայն չեխերը: Անշուշտ, այնտեղ էլ երբեմն կը պատահի գերմանական բառբառը—բայց թէ դրա պատճառը կը լինի ներկայ եղած մի գերմանացի, որի շնորհիւ քնացեալ հասարակութիւնը կը սկսէ զործածել պետական երկրորդ լեզուն: Իրաւ է, հարուստ չեխ գերդաստանները աւելի սիրով խօսում են գերմաներէն, բացառապէս կարդում են գերմանական գրքեր և լրագիրներ, յաճախում են գերմանական թատրոնը, գերմաներէն են կրթում իրանց երեխայոց,—մի քանիսը կարծելով թէ դա է ընդունած լաւ ձևը, միւսները հետեւելով մոդային, այդ անմիտ մոդային,—բայց թէ դուք պէտք է տեսնէք թէ այդ գերդաստանների պետերը ինչպիսի համոզմամբ իրանց ձայնը, ընտրութիւնների ժամանակ, տալիս են չեխ պատգամաւորին: Իրաւ է մեր գիտնականները իրանց շարադրութիւնների մի մասը հրատարակում են գերմաներէն լեզուով, բայց թէ դա անոււմ է չեխ անւան հռչակը՝ նաև արտասահմանում տարածելու:

—Շատ շնորհակալ եմ, ասաց վերկենայով իւր տեղից միստեր Պլումպուդինգը, ձեր պատրաստականութեան համար որ դուք առաջարկեցիք առաջնորդս լինելու: Սակայն ներեցէք եթէ ես օգտուելու չը լինեմ ձեր առաջարկութիւնից: Թէև ձեր այդ բոլոր յարաբերութիւնները ինձ չեն վերաբերում, սակայն ես վախ եմ կրում մի գուցէ ամեն քայլափոխում մաղձա շարժւի սրտումս: Առերես՝ տաքարիւններիցը չեմ ես. բայց այդպիսի մի անմոռութեան վրա սառնասիրտ նայելը՝ իմ ոչժերից վեր է: Եթէ դուք գերմանացիների հետ անհաշտ կռիւ մէջէք—ապա ներեցէք ոճիս—դուք կուտամ էք նրանց հետ դանակի հակառակ կողմով. բռն իրողմովը հարւածում էք թշնամուն, իսկ սուր կողմովը ձեր իսկ կուրծքն էք քերթում: Մնաք բարեւ, վերջապէս ահա և կենները բերում է ձեզ՝ ձեր պատուիրած rizek'ը: